ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

(քննարկման նյութեր)

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ինքնասպանություն

(քննարկման նյութեր)

Սբ Էջմիածին 2013

Սույն գրքույկը ներկայացնում է ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի «Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի շրջանակներում կազմակերպված «Ինքնասպանություն» թեմայով քննարկման (1 նոյեմբերի 2013 թ., Սբ Էջմիածին) նյութերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան …….…..…5
Զեկույց Ա - Ինքնասպանություն՝ աններելի մեղք…..… 7
Զեկույց Բ - Սուիցիդ……. ..26
Ամփոփում……..... 39

ՆԱԽԱԲԱՆ

2013 թ. նոյեմբերի 1-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, նախաձեռնությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի և Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի, «Երկխոսության սրահ» համատեղ ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Ինքնասպանություն» թեմայով քննարկում:

Ժամանակակից կյանքի առաջընթացն իր տարբեր մարտահրավերներով լուրջ սպառնալիք է դարձել մարդու գոյության համար: Այս առաջընթացի պայմաններում կյանքի բազմաբնույթ ձևերը, սոցիալ-տնտեսական պայմանները, քաղաքական ու արժեքային ճգնաժամերը յուրահատուկ ներգործություն են ունենում մարդու հոգեկան աշխարհի վրա:

Այսօր աշխարհում ինքնասպանությունը համարվում է 15-34 տարեկան մարդկանց մահացության երրորդ գլխավոր պատճառը. ամեն մեկ րոպեում աշխարհում ինքնասպանություն է գործում երկու մարդ: Հայաստանում ևս ինքնասպանությունների ցուցանիշը բարձր է՝ տարեկան շուրջ 400 դեպք: Ցավալի է, որ ինքնասպանությունների ու սուիցիդալ փորձերի թիվն անընդհատ աճում է: Որքան էլ զարմանալի է, պատճառները սոցիալական չեն: Դրանք առաջին հերթին պետք է փնտրել մարդկության հոգևոր ճգնաժամի մեջ:

Այս առումով մտահոգիչ թիվ են կազմում նաև ուղղակի կրոնական հողի վրա գործված ինքնասպանությունները: Տարբեր կրոններ տարբեր մոտե-

ցումներ ունեն ինքնասպանության խնդրին: Քրիստոնեությունը խստորեն դատապարտում է այն՝ նույնիսկ ավելի ծանր մեղք համարելով, քան ուրիշին սպանելը: Քրիստոնեության տեսանկյունից՝ ինքնասպանությունը անհավատության յուրահատուկ դրսևորում է, հավիտենական կյանքի իրողության ժխտում:

«Երկխոսության սրահ»-ի քննարկումը առիթ էր քննելու և քրիստոնեական պրիսմակով անցկացնելու ինքնասպանության երևույթը՝ այն դիտարկելով նաև հոգեբանական տեսակետից: Եկեղեցական կանոնական կյանքում այս երևույթին են առնչվում նաև շուտափույթ լուծման կարոտ որոշակի հովվական հարցեր, որոնցից է ինքնասպանների ընտանիքների և հարազատների հանդեպ պատշաճ հոգևոր խնամք իրականացնելու հարցը:

Գրքույկում տեղ են գտել քննարկման ընթացքում հնչած զեկույցները և քննարկման ամփոփումը:

Վահրամ քահանա Մելիքյան

ԶԵԿՈՒՅՑ Ա

Տ. Զաքարիա վարդապետ Բաղումյան
Ծիսահայեցակարգային գրասենյակի
պատասխանատու

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱՆՆԵՐԵԼԻ ՄԵՂՔ

Ինքնասպանության երևույթն այնքան հին է, որքան մարդկությունը: Միայն մարդուն բնորոշ ինքնաարտահայտման այս ձևը նրան տարբերում է անգամ կենդանիներից, որոնք գիտակցաբար երբեք չեն դիմում այս քայլին: Ինքնասպանության դրդող պատճառները նույնպես զանազան են: Ըստ մասնագետների՝ այսօր աշխարհում ինքնասպանությանը նպաստող շուրջ 800 պատճառ կա: Բնական է, որ ինքնասպանության հիմնահարցն ուսումնասիրող գիտությունը՝ սուիցիդոլոգիան, համաշխարհային կրոնները և գիտության այլ բանագավառներ փորձել են համակողմանիորեն քննել այս խնդիրը, բացատրել դրա պատճառները, աճման և նվազման միտումները և առաջադրել կանխարգելման ճանապարհներ:

Ցավոք սրտի, ինչպես մոլորակի տարբեր անկյուններում, այնպես էլ Հայաստանում վերջին շրջանում ավելացել է ինքնասպանությունների քանակը և գրանցվել աճի միտում: Գրեթե ամեն օր հայկական ԶԼՄ-ներով կարելի է լսել ինքնասպանությունների կամ ինքնասպանության փորձերի մասին, որոնք անհանգստացնում են մեր հասարակությանը՝ միևնույն ժամանակ զգոնության և սթափության կոչ անելով: Այս

առումով պաշտոնական վիճակագրությունը ևս մխիթարիչ չէ[1]: Եթե նկատի ունենանք, որ իրականում դրանց թիվը շատ ավելին է, ապա իսկապես մտահոգության և մտորելու առիթ ունենք:

Վստահ ենք, որ ինքնասպանության կանխարգելման հարցում մեծ դերակատարություն ունի նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ բազմադարյան իր հոգևոր փորձառությամբ, իմաստությամբ և ուղղափառ դավանությամբ, որոնք կարող են մարդուն ետ պահել այս անմիտ քայլից, իմաստավորել նրա կյանքը և հույս ներշնչել: Ուստի պիտի փորձենք ստորև ամփոփ ցույց տալ Հայոց Եկեղեցու կեցվածքն ինքնասպանության խնդրի վերաբերյալ՝ օգտվելով Ս. Գրքից, կանոնական գրվածքներից, հայրաբանական ժառանգությունից և ընդհանրապես Քրիստոսի Եկեղեցու արժեհամակարգից:

Հայոց Եկեղեցին, լինելով Ընդհանրական Եկեղեցու անբաժանելի և անքակտելի մի մասը, խիստ դիրքորոշում ունի ինքնասպանության կամ անձնա-

---

[1] Ըստ ՀՀ վիճակագրական տվյալների՝ ինքնասպանության և ինքնասպանության փորձերի պատկերն այսպիսին է՝ 2009 թ. 498 անգամ, 2010 թ. 592, 2011 թ. 647: Նշենք, որ այս ցուցանիշները հրապարակվում են յուրաքանչյուր վեց ամիսը մեկ: Աշխարհում տարեկան ինքնասպանություն է գործում շուրջ 1.000.000 մարդ, իսկ ինքնասպանության փորձերի թիվը տասնյակ անգամ ավելի մեծ է: Համաշխարհային առողջապահական կազմակերպության կանխատեսումներով 2020 թ. շուրջ 1, 53 միլիոն մարդ ինքնասպան կլինի, 10-20 անգամ ավելի մարդիկ ինքնասպանության փորձ կկատարեն: Փաստորեն միջին հաշվով յուրաքանչյուր 20 րոպեն ինքնասպան կլինի մեկ մարդ, իսկ յուրաքանչյուր 1-2 վայրկյան հետո կկատարվի մեկ սուիցիդալ փորձ. Տե՛ս **Կամո Վարդանյան**, Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդալ վարքի պատճառականության շղթայում, Երևան, 2008, էջ 14:

սպանության հարցում: Վերջինս աններելի մեղք է, հայհոյություն և ըմբոստություն հենց կյանք պարգևողի՝ Աստծո դեմ: Նմանատիպ դեպքերում Եկեղեցին նույնիսկ թաղման կարգ չի կատարում՝ ինքնասպանի դատաստանը թողնելով Աստծուն: Քրիստոսի Եկեղեցու տասներկու վարդապետներից Ս. Աթանաս Ալեքսանդրացու (298-373) անվամբ պահպանված ԺԱ կանոնում խնդրի վերաբերյալ հստակ նշվում է, որ ինքնասպանության դեպքում քահանան չի կարող որևէ կարգ կատարել բացառությամբ այն դեպքերի, երբ հանգամանքների ճշտման և ստուգման արդյունքում պարզվում է, որ ինքնասպանությունը կատարվել է «պակասամտութեան», անսթափության, հոգեկան հիվանդության պատճառով[2]: Նույն այս կանոնը և պատճառաբանությունն է մեջբերում նաև Մխիթար Գոշը († 1213) իր Դատաստանագրքում[3]:

Կապադովկյան հայրերից Ս. Բարսեղ Մեծի (329-379) կանոններում դատապարտվում է անգամ «գիտակցաբար արգանդի պտուղը ոչնչացնողը», նրա արարքը համարվում է մարդասպանություն, և տվյալ կինը մեղադրվում է ոչ միայն պտուղը ոչնչացնելու, այլև իր կյանքը վտանգի ենթարկելու համար[4]: Այս կանոնը ցույց է տալիս, որ պտուղ ոչնչացնելը, և այդ քայլով իրեն մահվան հասցնելը դիտվել են իբրև ինքնասպանության

---

[2] Կանոնագիրք հայոց, Ա, աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 295:

[3] **Մխիթար Գոշ**, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975, Գլուխ ՃԿԵ, էջ 100:

[4] Տե՛ս **Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2011, էջ 198, **Սերժ Մայիլյան**, Ինչո՞ւ է մերժելի ինքնասպանութիւնը, «Էջմիածին», 2000, Է, էջ 49:

փորձ և դատապարտվել Եկեղեցու կողմից: Եթե ինքնասպանության փորձ կատարած անձը ողջ է մնում և հետագա իր կյանքում զղջում և ապաշխարած մահանում, ապա այդ դեպքում Եկեղեցին նրա վրա անպայման կատարում է թաղման կարգ և աղոթում նրա հոգու փրկության համար: Վերոգրյալ կանոնական գրվածքները հստակ ընդգծում են, որ քրիստոնեական արժեհամակարգում կյանքն ընկալվել է իբրև Արարչից տրված շնորհ, որի պահպանության սրբազան պարտականությունը տրված է Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված մարդուն: Շեշտելով մարդու մեջ աստվածանմանությունը և խոսելով ինքնասպանության մասին՝ Ե. դարի հայ նշանավոր փիլիսոփա և մտածող Ս. Դավիթ Անհաղթն ասում է. «Եվ քանի որ նա, ով նման է Աստծուն, ինքն իրեն չի սպանում, ապա պարզ է, որ ամեն ոք, ով ինքնասպան է դառնում, ոչ միայն չի նմանվում Աստծուն, այլև հակառակվում է նրան՝ ցանկանալով ինքն իրեն մեռցնել և քանդել այն կապը, որ Նա է կապել և անջատել հոգին մարմնից»[5]: Իսկ Ս. Հովհան Մանդակունի կաթողիկոսն իր ճառերից մեկում ասում է. «Անձնասպան լինելն ավելի մեծ չար է, քան ուրիշին սպանելը»[6]:

Այս համատեքստում միանգամայն բնական և ընկալելի է Եկեղեցու որոշակի և կոշտ դիրքորոշումն ինքնասպանության հարցում, այլապես դրանց թիվն ավելի մեծ կլիներ և մարդկանց կմղեր ինքնասպանության: Հետևաբար՝ Հայոց Եկեղեցին իր հստակ դիրքորոշմամբ հետ է պահել շատերին ինքնասպա-

---

[5] **Դավիթ Անհաղթ**, Երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 74:

[6] **Սուրբ Հովհան Մանդակունի**, Ճառեր, Ս. Էջմիածին, 2008, էջ 144:

նություն գործելուց և երբեք չի խրախուսել այն՝ ի տարբերություն այլ կրոնների կամ ժամանակակից կրոնական շարժումների, որոնք ինքնասպանությունը համարում են փրկության կամ ինքնադրսևորման մի ձև:

Հայ իրականության մեջ ընդունված սովորություն է եղել անձնասպաններին թաղել ընդհանուր գերեզմանոցներից դուրս՝ առանձին վայրում և բերանքսիվայր, այսինքն՝ դեմքով ոչ թե դեպի երկինք, այլ՝ դեպի դժոխք: Փաստորեն այդ անխոհեմ քայլով ինքնասպաններն իրենց դատապարտում են հավիտենական մահվան և տանջանքների՝ զրկվելով ոչ միայն Տիրոջ ողորմությունից և ներկայությունից, այլև ինքնաբերաբար հայտնվելով Եկեղեցուց դուրս: Եթե մարդասպանն իր կյանքի ընթացքում կարող է ապաշխարել, քավել իր մեղքերն ու թողության արժանանալ, ապա ինքնասպանի դեպքում այս ամենն անհնար է, քանզի չկա մեղքերի քավություն ֆիզիկական մարմնից դուրս:

Անդրադառնալով մարդասպանության և ինքնասպանության մեղքերի տարբերությանը՝ մեր եկեղեցու եռամեծ վարդապետներից Ս. Գրիգոր Տաթևացին (1346-1409) ինքնասպանությունն ավելի մեծ մեղք է համարում, քան որևէ մեկին կյանքից զրկելը՝ բերելով հետևյալ երեք փաստարկները՝

ա. կենդանի մնալով՝ մարդասպանը հետագայում կարող է քավել իր մեղքերը, ինչպես որ արեցին Հիսուսին գեղարդով խոցած Ղուկիանոս հարյուրապետը և Քրիստոսին խաչած և հետագայում դարձի եկած հրեաները

բ. ուրիշին սպանողը մարդկանց է թշնամի և հակառակորդ դառնում, իսկ անձնասպանը հենց

Աստծուն է հակառակվում, քանի որ Աստծո գործն է մարմնի կապելն ու արձակելը

գ. ուրիշին սպանողի համար այս կյանքում հնարավորություն կա արյամբ վճարելու, ինչպես որ Օրենքն է ասում: Ուստի որքան մեծ է հավիտենական տանջանքն այս աշխարհում մարմնի տանջանքից, այնքան մեծ մեղք է իրեն սպանելը և անվախճան տանջանքին արժանանալն ուրիշին սպանելուց և այստեղ տանջանքը կրելուց[7] :

Հոգևոր դիտանկյունից ինքնասպանության ծանր մեղքն իրականում հետևանքն է անհուսության և հավատքի տկարացման, երբ մարդ կորցնում է ապրելու հույսը, այլ խոսքով՝ հույսն առ Աստված, և չի հավատում հանդերձյալ կյանքին: Անկասկած, եթե ինքնասպանը հավատք ունենա Աստծո հանդեպ և Ս. Գրքի, հայրախոսական ժառանգության տեսանկյունից մի պահ պատկերացնի Վերջին ահեղ դատաստանն ու մեղավորներին հասանելիք անասելի տանջանքները, ապա ոչ մի դեպքում երբեք նման քայլի չի գնա: Հավատացյալ մարդն այս կյանքում ամեն կերպ փորձում է իմաստավորել իր ամեն օրն ու ժամը, բարիք գործել և արարել հանուն հավիտենականության, որ խոստացել է մեզ Աստված, քանզի աներկբա հավատում է հոգու անմահությանը և փրկությանը: Մարդկանց հոգևոր փորձառությունը բազմիցս ապացուցել է, որ այնտեղ, որտեղ անզոր են բժշկությունը և գիտության նվաճումները, օգնության կարող է հասնել հենց հավատքը՝ հույսի, լույսի և սիրո մեջ պարուրելով ադամորդուն: Հետևաբար՝ կենդանի և ճշմարիտ

---

[7] **Գրիգոր Տաթևացի,** Ամառան հատոր, Երուսաղէմ, 1998, էջ 20-21:

հավատք ունեցող մարդը երբեք չի դիմում ինքնասպանության, որովհետև նույնիսկ անելանելի թվացող պահերին հավատում է Տիրոջ ողորմությանը և ապավինում Նրան, իր հույսը դնում է ոչ թե մարդկանց վրա, այլ՝ Աստծո, ով միշտ խնամում է իր արարածներին և երբեք մենակ չի թողնում նրանց: Տվյալ պահի հուսահատությունը, մերժված սիրո դառնությունը, սոցիալ-տնտեսական տարաբնույթ խնդիրները, ունեցվածքի կորուստը, պարտքեր կուտակելը, աշխարհին և կյանքին խեթ աչքով նայելն ու բազում այլ պատճառներ չպետք է պատճառ դառնան ինքնասպանության: Ամեն մարդ այս կյանքում ունի իր կրելիք խաչը կամ այլ կերպ՝ առաքելությունը, որը պետք է համբերությամբ և հավատքով տանի: Միշտ հիշենք, թե ինչ է ասում Ս. Գիրքն այս մասին. «Ով մինչև վերջ համբերի, կփրկվի» (Մատթ. Ժ 22): Իսկ Աստված մարդուն տալիս է այնքան «փորձություն», ինչքան որ նա կարող է տանել:

Ինքնասպանությունը երբեք ելք չէ: Ամեն մի մարդ կարող է հետ կանգնել այդ չար մտքից, եթե ճշմարիտ հավատք ունենա: Հովհաննես ավետարանչի վարքում խնդրի վերաբերյալ մի հետաքրքրական պատմություն կա: Մի հեթանոս դրամի մեծ պարտք ուներ: Իր պարտատերերից նեղվելով և անհուսության պատճառով նա գնում է հրեա դեղագործի մոտ և նրանից թույն խնդրում: Թույնը խմելու պահին նա հանկարծ հիշում է քրիստոնյաների սովորությունը և խմելուց առաջ օրհնում ուտելիքն ու ըմպելիքը և խաչակնքում: Նա այսպես է անում ևս մեկ անգամ: Ի զարմանս իրեն՝ տերունական նշանի զորությամբ նրա հետ ոչինչ չի պատահում: Լսելով այս մարդու պատմածը՝ հրեա

դեղագործը գնում է Հովհաննես ավետարանչի մոտ, հավատում խաչյալ Քրիստոսին և մկրտվում: Ավետարանիչը կանչում է նաև պարտք ունեցողին, դարձի բերում նրան, ապա կարգադրում նրան բռով խոտ վերցնել և տալ պարտատերերին: Եվ Աստծո օգնականությամբ խոտն ընտիր ոսկի է դառնում, և նա վերադարձնում է իր պարտքերը[8]: Նման պատմությունները ևս մեկ անգամ ապացուցում են, որ ինքնասպանությունը խնդիրները լուծելու լավագույն տարբերակը չէ: Հավատքը և հույսը կարող են վերափոխել մարդուն, Աստված միշտ մեկ բաց դուռ պահում է մարդու համար, քանզի անսահման սիրով է մեզանից յուրաքանչյուրին սիրում:

Ինքնասպանության պատճառներից և մեր հասարակական կյանքի արդի մարտահրավերներից է նաև հոգևոր կեղծ պատրանքներով տարվելը, որն առկա է հատկապես մերօրյա տոտալիտար աղանդներում, երբ մարդ ինքնասպանության է դիմում այն համոզմամբ, որ այդպիսով ավելի շուտ կհասնի Աստծուն կամ կժառանգի երկնքի արքայությունը[9]: Դժբախտաբար, իրականում նմանատիպ ինքնասպանության հետևանքով հակառակն է կատարվում՝ մարդ ոչ թե փրկության

---

[8] «Գանձասար» աստուածաբանական հանդես, հ. Բ, Երևան, 1992, էջ 258-259:

[9] Բերենք երկու օրինակ՝ 1978 թ. նոյեմբերի 18-ին, Ջոնսթաունում «Ժողովուրդների տաճար» կրոնական կազմակերպության աղանդապետ Ջիմ Ջոնսի պատճառով 909 հոգի, թույն խմելով, խմբային ինքնասպանություն գործեցին, իսկ «Դավթի սերնդի» ղեկավար Դավիթ Կորեշը 1993 թ., հիմնվելով սուրբգրային մի քանի համարների վրա, ինքնահրկիզման հրաման տվեց, որից հետով 86 մարդ իրեն կրակը նետեց:

է արժանանում իր այդ քայլով, այլ՝ հավիտենապես դատապարտվում: Ինքնասպանությամբ մարդ չի ազատվում իր խնդիրներից կամ հանգստություն գտնում, այլ առավել տառապում և տանջվում է, բայց այս անգամ՝ այն աշխարհում: Եվ հոգևոր այս պատերազմում հաղթանակած է դուրս գալիս սատանան, որն այդպիսի մտքեր է առաջացնում մարդու մոտ: Չպետք է մոռանալ հետևյալ պարզ ճշմարտությունը՝ Աստված ցանկանում է, որ ամեն ոք ապաշխարի և ճշմարիտ գիտությանը գա, Քրիստոսով նոր արարած դառնա, որը պիտի զինված և զարդարված լինի առաքինություններով:

Քրիստոնեական վարդապետության համաձայն՝ կյանքն Աստծուց մարդուն տրված մեծագույն շնորհ է, որի տերն Ինքն Աստված է: Այն որևէ մեկի անձնական սեփականությունը չէ, ուստի մարդ ամենայն պատասխանատվությամբ և զգուշությամբ պետք է մոտենա դրան՝ իրեն տրված այդ բարիքն օգտագործելով Տվողի կամքի համաձայն: Չէ՞ որ ինքնասպանության գործողությամբ մարդն իր վրա է վերցնում հենց Աստծո գործառույթը՝ ընդդիմանալով աստվածային այն ճշմարտությանը, որ Աստված է կյանք պարգևողն ու այն վերցնողը: Ուստի ով իրեն զրկում է աստվածատուր կյանքից, դրանով իսկ խախտում է աստվածային կարգը և արժանանում Աստծո զայրույթին:

«Ես եմ միայն, և Ինձնից բացի ուրիշը չկա: Ես եմ սպանում, և Ես եմ փրկում, Ես եմ հիվանդացնում, և Ես եմ բժշկում»,- ազդարարում է ամենակարող Աստված (Բ Օր. ԼԲ 39): Այստեղից պարզ է դառնում, որ հինկտակարանյան մարդիկ ունեին այն հստակ գիտակցությունը, որ միայն Աստված է տնօրինում կյանքի ողջ

ընթացքը: Ծնունդը և մահը մեր կյանքի անբաժանելի մասն են, որոնց տնօրինումը Տիրոջ ձեռքում է: Այն չի հարցնում հարո՞ւստ ես, թե՞ աղքատ, կի՞ն ես, թե՞ տղամարդ և այլն: Երբ գալիս է այս աշխարհից հեռանալու պահը, այդ ժամանակ ես միայն զգում անզորությունդ, և իմաստուն գտնվելու դեպքում հանգիստ և խաղաղ հոգով ավանդում ես հոգիդ՝ ապավինելով և հուսալով Տիրոջ ողորմությունը:

Վերոնշյալ իրողությունն է փաստում նաև Սամվելի մայր Աննան, երբ ասում է. «Տերն է սպանում և ապրեցնում, իջեցնում գերեզման և դուրս բերում այնտեղից: Տերն է աղքատացնում և հարստացնում, ստորացնում և բարձրացնում» (Ա Թագ. Բ 6-7): Իսկ Սողոմոն իմաստունն ասում է. «Դու ունես կյանքի և մահվան իշխանություն, և Դու ես դժոխք իջեցնում և հանում» (Իմաստ. ԺԶ 13):

Նոր Կտակարանի լույսի ներքո կյանքն իմաստավորվում է Քրիստոսով. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը» (Հովհ. ԺԴ 6), «Ես իսկ եմ հարություն և կյանք, ով հավատում է Ինձ, թեպետև մեռնի, կապրի, և ով կենդանի է ու Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. ԺԱ 25-26): Այս խոսքերին հավատացողը երբեք չի կարող ինքնասպանության դիմել, որովհետև կյանքն իմաստավորած կլինի և կհաղթահարի երկրային ամեն մի դժվարություն:

Մեր՝ Աստծուն պատկանելու մասին Պողոս առաքյալն ասում է. «Արդարև, մեզնից ոչ ոք իր համար չի ապրում և իր համար չի մեռնում. եթե ապրում ենք, ապա Տիրոջ համար ենք ապրում, և եթե մեռնում ենք, ապա Տիրոջ համար ենք մեռնում» (Հռոմ. ԺԴ 7-8): Իսկ մեկ այլ տեղ նա կարևոր է համարում այս մարմնի մեջ

կյանքի պահպանումը հանուն մերձավորի (տե՛ս Փիլ. Ա 25): Պետրոս առաքյալը հորդորում է քրիստոնյաներին. «Զա՛նք թափեցեք, որ Նա գտնի ձեզ անբիծ և անարատ, խաղաղության մեջ» (Բ Պետ. Գ 14), այսինքն՝ աշխատեցեք մաքուր ներկայանալ Տիրոջ առաջ, որի համբերատարությունը փրկություն է մեզ համար:

Ինքնասպանության մեղքի դեմ են նաև սուրգբրային հետևյալ տեղիները. «Չգիտե՞ք, որ Աստծո տաճար եք դուք, և Աստծո Հոգին է բնակվում ձեր մեջ: Եթե մեկն այն ապականի, ապա Աստված էլ նրան կապականի» (Ա Կորնթ. Գ 16-17): Հետևաբար՝ Աստծո պարգևի՝ կյանքի հանդեպ մարդու պատասխանատվությունը պետք է լինի գիտակցված և բարձր աստիճանի: Մարդ չի կարող իր կյանքի հետ վերաբերվել անպատասխանատու կերպով, քանզի ինքը չէ այն պարգևողը:

Հոգևորի շրջագծում շատ կարևոր է նաև դիմացինի մեջ տեսնել Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված մարդուն, որը ենթադրում է ուշադրություն և խնամք: Քրիստոնյան չի կարող անտարբեր գտնվել իր եղբոր, հարազատի կամ դրացու հանդեպ: Ցավոք, շատ հաճախ հենց անտարբերության, մարդկային պարզ շփման բացակայությունն են մարդուն մղում այս աններելի մեղքին:

Ինքնասպանության մեղքն աններելի է համարվում, քանզի այն Ս. Գրքի համատեքստում ընկալվում է իբրև հայհոյանք Ս. Երրորդության երրորդ անձի՝ Ս. Հոգու դեմ: Հիսուս Իր քարոզության ընթացքում ասաց. «Ամեն մեղք և հայհոյանք կներվեն մարդկանց, բայց Հոգու դեմ հայհոյանքը չպիտի ներվի» (Մատթ. ԺԲ 31): Այստեղ իսկապես հետաքրքրական է

Հիսուսի շեշտադրությունը և պնդումը, որ չի ներվում հատկապես Ս. Հոգու դեմ հայհոյությունը:

Ըստ Աստվածաշնչի՝ արարչագործությանը մասնակցում են Ս. Երրորդության երեք անձերը: Մասնավորապես Հոգու մասին Մովսես մարգարեն նշում է, որ Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա, որն էլ դարձավ մարդու կյանքի աղբյուրը, քանզի մարդու ստեղծման մասին Ս. Գիրքն ասում է. «Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի էակ դարձավ» (Ծննդ. Բ 7): Մեկնաբանական գրականության մեջ «կենդանության շունչ» արտահայտության ներքո Ս. Գրքի մեկնիչները հասկանում են հենց Ս. Հոգուն, որին Ե դարի նշանավոր աստվածաբան Ս. Եղիշե վարդապետն Արարածոց գրքի իր մեկնության մեջ անվանում է «շնորհաց Հոգի»[10]: Խնդրի պարզաբանման հարցում շահեկան են նաև հետևյալ սուրբգրային համարները. «Եթե տակավին իմ մեջ է հոգիս, և աստվածային շունչն ապրում է իմ ռունգերի մեջ» (Հոբ ԻԷ 3), «Աստվածային հոգին է ինձ ստեղծել, Ամենակալի շունչն է ինձ ուսուցանել» (Հոբ ԼԳ 4): Իսկ Ավետարանն ասում է. «Հոգին է կենդանարար» (Հովհ. Զ 64):

Քննելով այս սուրբգրային հատվածները՝ Ռաֆայել Պապայանն իր աշխատության մեջ իրավամբ արձանագրում է. «Այդ իսկ պատճառով, ավետարանական կտրվածքով, Ս. Երրորդության ենթատեքստում, կյանքի հերքում է համարվում հայհոյությունն՝ ուղղված Սուրբ Երրորդության այն անձի դեմ, որը կենդանություն պարգևեց մարդուն

[10] «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 783:

արարչության ժամանակ, իսկ դա Հորից բխող Սուրբ Հոգին է: Չորս Ավետարաններում հենց Սուրբ Հոգու դեմ ուղղված հայհոյությունն է համարվում մահվան ընտրություն»[11]:

Ինչպես տեսնում ենք, սուրբգրային վերոբերյալ բոլոր մեջբերումները փաստում են, որ կյանքն Աստծո պարգևն է, ուստի դատապարտելի է ինքնասպանության մեղքը, որը բացահայտ քայլ է ընդդեմ Աստծո և խախտումն աստվածաշնչյան «Մի՛ սպանիր» պատվիրանի:

Ինքնասպանության մասին խոսելիս պետք է հստակորեն զանազանել ինքնասպանություն և ինքնազոհողություն եզրերը: Եթե ինքնասպանությունն աններելի է և աստվածամերժ, ապա մյուսը աստվածահաճո է և ընդունելի: Եվ միայն այս համատեքստում պետք է հասկանալ Հիսուս Քրիստոսի ինքնազոհողությունը հանուն մարդկության փրկության կամ նահատակների գիտակցված մահը հանուն հավատքի և աստվածային մշտամնա ճշմարտությունների: Ս. Եղիշեի անմահ երկից մեզ փոխանցված «գիտակցված մահն անմահություն է» թևավոր արտահայտությունը որքան էլ ճշմարիտ է, բայց նաև որոշակի հավելումներ և պարզաբանումներ է պահանջում: Քանի դեռ պարզ չէ մարդու նպատակը, չենք կարող ասել՝ նրա կամավոր մահն ինքնազոհողությո՞ն է, թե՞ ինքնասպանություն, որովհետև ինքնասպանությունը ևս երբեմն գիտակցված մահ է: Ինքնասպաններից շատերը նույնպես գնում են գիտակցված մահվան, բայց այս դեպքում օրհնության

---

[11] **Ռաֆայել Պապայան,** Մարդու իրավունքի քրիստոնեական ակունքները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002, էջ 71:

փոխարեն դատապարտության արժանանում, քանզի վերջնական նպատակը բարին չէ:

Ինչպես Ընդհանրական, այնպես էլ մեր Եկեղեցու պատմության մեջ բազմաթիվ նահատակներ և Քրիստոսի վկաներ են եղել, ովքեր իրենց անձը զոհել են Աստծո անվան և փառքի համար: Նրանց նահատակության և Տիրոջ մասին կենդանի վկայության շնորհիվ հավատքն ավելի է զորացել և դարձի բերել շատ անհավատների, այսինքն՝ իրենց ինքնազոհաբերմամբ դարձել են շատերի փրկության պատճառ: Կյանքը դիմացինի, հարազատի համար տալը սիրո ամենամեծ դրսևորումն է, որի գերագույն օրինակը ցույց տվեց Հիսուս Քրիստոս. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ 13): Ուստի այս դիտանկյունից՝ հավատքի և սիրուց դրդված կյանքը նվիրաբերելն ու ինքնասպանությունը միանգամայն հակադիր երևույթներ են:

Ինքնասպանության մասին Աստվածաշունչը հիշատակում է ութ դեպք, որոնցից յոթը՝ Հին Կտակարանից, իսկ մեկը՝ Նոր Ուխտից: Դրանք են՝

1. Աբիմելեքի ինքնասպանությունը (Դատ. Թ 52-54)
2. Սամսոնի ինքնասպանությունը (Դատ. 29-31)
3. Սավուղի ինքնասպանությունը (Ա Թագ. ԼԱ 1-4)
4. Սավուղի զինակրի ինքնասպանությունը (Ա Թագ. ԼԱ 5)
5. Աքիտոփելի ինքնասպանությունը (Բ Թագ. ԺԷ 23)
6. Զամբրիի ինքնահրկիզումը (Գ Թագ. ԺԶ 18)
7. Ռաքսի ինքնասպանությունը (Բ Մակ. ԺԴ 37-46)
8. Հուդայի ինքնասպանությունը (Մատթ. ԻԷ 5):

Ս. Գրքում նկարագրված ինքնասպանության օրինակներից երևում է, որ դրանք կատարվել են հարկադրաբար: Եթե Սավուղի, Աքիտոփելի և Զամբրիի ինքնասպանությունները կարելի է համարել մինչ այդ ունեցած իրենց դատապարտելի ընթացքի հետևանք, ապա խնդիրն այլ է Ռաքսի դեպքում: Նա արդար մարդ էր, որին եբրայեցիները «հայր» էին անվանում: Ռաքսն իր հոգու ազնվությունը պահելու համար դիմեց այդ քայլին: Նույնն է նաև Սամսոնի պարագան, որն այդ քայլին դիմեց իր թշնամիներրից վրեժ լուծելու համար: Հետևաբար Ռաքսը և մյուսները չեն կարող դրվել նույն հարթության վրա: Բայց անգամ այս թվացյալ իրողությունները չեն կարող «մեղմացուցիչ» հանգամանք նկատվել ինքնասպանությունն արդարաց-նելու համար: Այստեղ ուզում ենք կանգ առնել երկու օրինակների վրա:

Սավուղն այն աստվածամերժ թագավորն էր, որը ոչ միայն անհնազանդ գտնվեց Աստծո հանդեպ և անտեսեց Նրա խոսքը, այլև «կոտորեց Տիրոջ քահանաներին»: Նրա հրամանով շատերը սրի քաշվեցին: Արդեն իսկ երկրավոր կյանքում դատապարտված լինելով՝ ինքնասպանությամբ նա վերահաստատեց իր աստվածմերժությունը և ըմբոստությունն Աստծո դեմ: Ի դեպ՝ նման երևույթներ հայտնի են ոչ միայն Աստվածաշնչից, այլ նաև պատմությունից, որի վառ օրինակներից մեկը Ներոն (54-68) կայսրն էր: Լինելով քրիստոնեության ոխերիմ թշնամիներից՝ նա ինքնասպանությամբ ոչ թե արտահայտեց իր զղջումը, այլ վերահաստատեց իր կյանքի և գործի աստվածամերժ էությունը: Ուստի

ամենևին էլ պատահական չէ, որ հայրաբանական գրականության մեջ Նեռը նույնացվում է Ներոնի հետ[12] :

Աստվածաշնչից հայտնի ինքնասպանության օրինակը Հիսուսի առաքյալներից Հուդա Իսկարիով-տացունն է, որը ոչ միայն մատնեց Տիրոջը, այլև անհուսությունից ինքնասպանության դիմեց: Դարերի ընթացքում և հատկապես մեր օրերում շատ է քննարկվել Հուդայի ինքնասպանության խնդիրը, փորձել են գտնել մեղմացուցիչ հանգամանքներ և անգամ արդարացնել նրա այդ արարքը: Փաստը մնում է փաստ, որ Հուդան չզղջաց, մինչև վերջ էլ չհավատաց Տիրոջ ողորմությանն ու ներողամտությանը և այլ ելք չգտնելով ինքնասպանության դիմեց: Սակայն նույն Նոր Կտակարանը մեզ տալիս է Հուդայի արարքին հակառակ Ս. Պետրոս առաքյալի օրինակը: Նա էլ երիցս ուրացավ Տիրոջը, բայց հետո զղջաց, ապաշխարեց, ինչպես Ավետարանում է ասվում. «Դառնապես լաց եղավ» (Մատթ. ԻԶ 75): Պետրոսի հետագա կյանքը և մարտիրոսական վախճանը Տիրոջ հանդեպ անսակարկ հավատարմության և նվիրվածության ակնհայտ վկայությունները դարձան:

Ինքնասպանության մասին խոսելիս ուզում ենք անդրադառնալ մի շատ կարևոր խնդրի նույնպես, որն առավելաբար հովվական-հոգեխնամական բնույթ ունի: Ովքեր գեթ մեկ անգամ մասնակցել են ինքնասպանի հուղարկավորության, կհամաձայնեն, որ շատ դժվար է ներկա գտնվել այդ ճնշող մթնոլորտում, երբ կարծես բառեր չկան սփոփելու և մխիթարելու համար: Խնդիրն առավել բարդ է հատկապես հոգևորականի

---

[12] «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 774:

պարագայում, որը մերժում է թաղման կարգ կատարել՝ շատ հաճախ չընկալվելով մահացածի հարազատների կամ բարեկամների կողմից: Բացառված չէ, որ արդյունքում նրա հարազատները հեռանան եկեղեցուց և իրենց մխիթարությունը գտնեն այլ տեղում:

Այո՛, ինքնասպանն այդ արարքով ինքն իրեն արդեն իսկ դատապարտել է կորստյան, և մենք ոչինչ չենք կարող նրա համար անել՝ նրա դատաստանը թողնելով Աստծուն: Բայց իբրև եկեղեցի և հոգևորականություն՝ մենք խնդիր և պարտականություն ունենք սփոփելու և մխիթարելու նրա ընտանիքի անդամներին և հարազատներին՝ դուրս բերելով նրանց հոգեկան այդ բարդ և ծանր վիճակից: Այս առումով տարբեր հոգևորականների փորձառությունը ցույց է տալիս, որ նմանատիպ դեպքերում ազդու և հոգևոր խոսքը մեղմացնում է նրանց վիշտը և ինչ-որ ձևով ամոքում նրանց վերքը: Իրենց վշտի և ցավի շուրջ համախմբված տեսնելով հոգևորականին, բարեկամներին, հարևաններին ու մտերիմներին՝ նրանք միայնակ չեն զգում իրենց: Ցավն առավել ծանր է քրիստոնյա ընտանիքում կատարված ինքնասպանության դեպքում, քանզի նրանք քաջ գիտակցում են կատարվածի ամբողջ լրջությունը: Ուստի պետք է գտնել ձևեր և խոսքեր՝ մարդկանց վիշտը փոքր-ինչ մեղմելու համար: Այս հարցում քրիստոնեական տարբեր եկեղեցիներ փորձել են լուծումներ առաջադրել, որպեսզի կարողանան ինչ-որ կերպ օգտակար լինել հատկապես ինքնասպանի հարազատներին:

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին թույլատրում է թաղման կարգ կատարել այն ինքնասպանի վրա, որը զղջացել է և ապաշխարել մահից առաջ կամ երբ

ինքնասպանությունը կատարվել է հոգեկան անհավասարակշռության դեպքում[13]: Իսկ Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ս. Սինոդը 2011 թ. հուլիսի 27-ի որոշմամբ հաստատեց աղոթքի մի կարգ ինքնասպանի հարազատներին սփոփելու համար՝ հորդորելով նրանց ողորմություն կատարել և աստվածահաճո կյանքով ապրել[14] :

Հայոց Եկեղեցին այսօր նման կարգ չունի: Ինքնասպանությունների դեպքում, երբ տվյալ անձի հարազատները դիմում են հոգևորականին, լավագույն դեպքում վերջինս այցելում է նրանց և իր խոսքով փորձում մխիթարել ներկաներին: Հաշվի առնելով խնդրի լրջությունը և մեր ժողովրդի մոտ առաջացած պահանջը՝ կարծում ենք, որ հոգեխնամության և հովվական տեսանկյունից լավ կլինի ստեղծել մի կարգ՝ բաղկացած մի քանի տուն սաղմոսներից, շարականից, սուրբգրային մեկ ընթերցվածքից և աղոթքից, որը կկատարվի ոչ թե ինքնասպանի վրա, այլ նրա ընտանիքի և հարազատների համար՝ իբրև մխիթարություն և սփոփանք: Միասնական աղոթքը կլինի հենց այն ամոքիչ բալասանը, որի կարիքն ունեն նման բարդ իրավիճակներում հայտնված մարդիկ:

Վերջում ցանկանում եմ ևս մեկ անգամ հիշեցնել աստվածային ճշմարտությունը՝ կյանքն աստվածապարգև է, և մենք ապրում ենք շնորհաց ժամանակաշրջանում, ուստի ամեն ինչ անենք այն իմաստա-

---

[13] Տե՛ս http://www.vatican.va/archive/ENG1104/__P4C.HTM:

[14] Տե՛ս http://www.patriarchia.ru/db/text/1586149.html, Основы социальной концепции Русской Православной Церкви, Москва, 2000, стр. 70:

վորելու համար, ինչպես Ս. Գիրքն է ասում. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 16), «Ընտրի՛ր կյանքը, որպեսզի ապրեք դու և քո սերունդը: Պետք է սիրես քո Տեր Աստծուն, լսես Նրա ասածը, կապված մնաս Նրան, որովհետև Նա է քո կյանքն ու երկարակեցությունը» (Բ Օր. Լ 19-20):

ԶԵԿՈՒՅՑ Բ

Միհրդատ Մաղաթյան
կլինիկական հոգեբան

ՍՈՒԻՑԻԴ

Ինքնասպանությունների վերաբերյալ արված վերլուծությունները վկայում են, որ պատմական զարգացման հետ սոցիալական զարգացումը համընթաց չէ մարդկային կյանքի բավարարվածության հետ և մարդուն ավելի երջանիկ չի դարձնում: Սոցիալական ադապտացիայի ծայրահեղ աստիճանը սոցիալական կապերի կորուստն է, մի վիճակ, որը բերում է ինքնասպանությունների: Շատ մարդիկ ինքնասպանությունները կապում են երկրի սոցիալական վիճակի և սոցիալ-քաղաքական այլ գործոնների հետ: Սակայն, ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը և այլ հետազոտություններ, այսօր ինքնասպանությունների ցուցանիշով ամենաբարձր հորիզոնականները զբաղեցնում են աշխարհում սոցիալապես ամենաբարեկեցիկ սկանդինավյան երկրները:

Հանդիսանալով շեղման մի ձև՝ սուիցիդը ոչ թե մեզանից տանում է «հերոսների», ինչպես կարծում են շատերը, այլ առավելաբար թույլ անձանց, ովքեր ինքնուրույն չեն կարողանում հաղթահարել իրենց առօրեական խնդիրները: Ինքնասպանություն գործող մարդիկ սովորաբար գտնվում են սուր հոգեկան ցավի,

սթրեսի վիճակներում: Հաշվի առնելով այն փաստը, որ մարդու ինքնապաշտպանական մեխանիզմները ի ծնե գտնվում են նրա հոգեկանի հիմքում, ապա դժվար չէ հասկանալ, որ ինքնասպանություն կատարելու պահին մարդու մոտ խանգարված են լինում հիմնային որոշ հարցեր: Այսինքն՝ համարձակ կարող ենք ասել, որ ինքնասպանություն գործող մարդիկ անխտիր գտնվում են հոգեկան անհավասարակշիռ վիճակում՝ գոնե այդ պահին: Նման հոգեկան անհավասարակշիռ վիճակներից գերիշխողը մեծ դեպրեսիան է, ինչը մարդուն ստիպում է ապագային նայել առանց որևէ հույսի:

Աշխարհի ամենատարբեր երկրներում ինքնասպանությանը տրվել են ամենատարբեր գնահատականներ: Որոշ ասիական երկրներում գիտակցված ինքնասպանությունը եղել է ազգային ավանդույթի մի մաս: Այն արդարացվել է պատվի մասին ունեցած ազգային պատկերացումներով (օրինակ՝ սամուրայները ֆեոդալական Ճապոնիայում) կամ էլ՝ ընտանիքի սոցիալական վիճակներով: Օրինակ՝ ծերունիները, ովքեր այլևս անկարող էին մասնակցել հաջորդ գարնանացանին, աշնանը ինքնասպան էին լինում, որպեսզի դժվարին ձմռանը նեղություն չպատճառեին իրենց ընտանիքին՝ դառնալով ավելորդ «ուտող բերան»:

Շատ ազգությունների ավանդապատումներում և մատենագրություններում ինքնասպանության երևույթի և ինքնասպանների նկատմամբ արտահայտված է քննադատական վերաբերմունք: Հայկական առասպելաբանության մեջ, ինքնասպանների հոգիները վեր են ածվել, այսպես կոչված, «գյոռմափշտիկների»՝ անթրոպոմորֆ և կենդանամորֆ արարածների: Գյոռմափշտիկները կատուների, շների, գայլերի,

ավանակների և այլ կենդանիների տեսքով գիշերները կանգնել են գերեզմանոցներին մերձակա ճամփեզրերին և վախեցրել անցորդներին՝ հետևից հանկարծակի թռչելով նրանց վրա, իսկ լուսաբացին վերադարձել իրենց գերեզմանները:

Սուիցիդը մարդու ինքնադեստրուկտիվ վարքագիծ է՝ ուղղված մարդուն կյանքից զրկելու մտադրության կամ կրիտիկական վիճակում մահվանից խուսափելու իրական հնարավորություններից հրաժարման:

Ինքնասպանությունները դասակարգվում են որպես իրական, ցուցադրական և թաքնված: Իրական ինքնասպանությունները հազվադեպ են ինքնաբերական լինում: Հաճախ դրանց նախորդում են մահվան մասին մտքերը, «էկզիստենցիալ ճգնաժամ»-ը (կյանքի իմաստի կորուստը), դեպրեսիվ վիճակները կամ ուղղակի երկարատև ճնշվածության վիճակները: Ցուցադրական ինքնասպանության փորձեր կատարում են այնպիսի մարդիկ, ովքեր փորձելով ինչ-որ մեկին ինչ-որ բան ապացուցել կամ էլ ինչ-որ նպատակի հասնել, ձևացնում են, թե պատրաստվում են ինքնասպանություն գործել, իսկ իրականում սպասում են վերահաս օգնության: Սա մարդու հիստերիկ վարքագիծ է: Սակայն հաճախ պատահում է այնպես, որ մտերիմների նյարդերի հետ խաղալով, նման շանտաժիստը ժամանակը ճիշտ չի հաշվարկում, և ինքնասպանության ցուցադրական փորձերը դառնում են իրականացված ինքնասպանություններ: Ցուցադրական ինքնասպանությունները բնորոշ են դեռահասներին, չնայած, հասուն մարդիկ նույնպես երբեմն կարող են նման խաղեր խաղալ մահվան հետ:

Ինքնասպանության փորձերի հաշվարկ ո՛չ մեր, ո՛չ էլ աշխարհի որևէ այլ երկրում չի կատարվում: Փոխարենն ունենք հետևյալ վիճակագրությունը. մեկ «հաջողված» ինքնասպանությանը բաժին է ընկնում 7-10 «չհաջողված» ինքնասպանության փորձ:

Թաքնված ինքնասպանություն են անվանում այն վարքագիծը, որը սովորաբար ուղղակիորեն չի բերում մահվան, սակայն վտանգավոր է և կրճատում է կյանքը: Սա այն պարագայում, երբ մարդը լիարժեք գիտակցում է իր արարքի վտանգի չափը, սակայն հնարավոր ռիսկի նկատմամբ նա անտարբեր է: Թաքնված ինքնասպանության օրինակներ են ալկոհոլիզմը, ծխախոտամոլությունը, ծանր հիվանդությունների ժամանակ բժշկական օգնությունից հրաժարվելը, ճանապարհային երթևեկության կանոնների անտեսումը և այլն: Հոգեբանները նման վարքագիծը անվանում են ինքնափլուզող և դասակարգում են թաքնված ինքնասպանությունների շարքին:

Գիտակցված ինքնասպանությունը հիմնականում ասոցիալ է. որքան անձը ավելի քիչ է ինտեգրված, ավելի մեծ է սուիցիդալ տրամադրվածության վտանգը: Այն խորապես էգոցենտրիկ է: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ «էգոիստական» ինքնասպանությունները զգալիորեն գերակշռում են «ալտրուիստական» ինքնասպանություններին: Սա պայմանավորված է ոչ միայն արտաքին մի շարք գործոններով, այլև օտարին անտեսանելի ներքին անձնային պատճառներով:

Ինքնուրույն որոշում ընդունելու ունակություն չունեցող մարդիկ ավելի քիչ են ենթարկվում ինքնասպանության ռիսկի: Ինչ-որ առումով՝ տերերն ավելի հաճախ են ինքնասպան լինում, քան՝

ստրուկները: Մարդկության ողջ պատմության ընթացքում հարուստն ավելի հեշտ է կյանքին վերջ տվել, քան՝ աղքատը: Ինտելեկտուալ մտորումների հակում ունեցողն ավելի է հակված սուիցիդալ տրամադրվածության, քան՝ բանվորը:

Ինքնասպաններնի իրենց հոգեբանական դիմանկարներով դասակարգվում են՝

1. էգոիստներ (հասարակությունից դուրս մղվածներ)
2. ալտրուիստներ (հասարակությանն այնքան նվիրված, որ պատրաստ են «հանուն ընկերության» մահվան)
3. անանուն ինքնասպաններ (չունեն համամարդկային արժեքներ և չեն ընդունում հասարակության կողմից ընդունված վարքագծեր)
4. ֆատալիստներ (դիմում են ինքնասպանության ինքնարտահայտման համար անհրաժեշտ ազատության բացակայությունից):

Սուիցիդ երևույթն, ինքնին, բաղկացած է մի քանի փուլից:

Նախասուիցիդն այն փուլն է, երբ մարդու մոտ ի հայտ են գալիս չտարբերակված մտքեր, մտորումներ կյանքի արժեքի բացակայության մասին, ինչպես օրինակ՝ «չարժե ապրել, հոգնել եմ այսպիսի կյանքից» և այլն: Չկա մահվան մասին հստակ պատկերացում, այլ առկա է կյանքի ինքնաբացառում: Այսպիսի սուիցիդալ ձևերը բնորոշ են նաև այս կամ այն իրավիճակներում գտնվող նորմալ մարդկանց: Սակայն եթե այս պրոցեսը դառնում է շարունակական, ապա նախասուիցիդի հաջորդ փուլում նկատվում են արդեն պասիվ սուիցիդալ մտքեր, որոնք բնորոշվում են կյանքին վերջ

տալու մասին երևակայական մտքերով և ֆանտազիաներով, ինչը արտահայտում է մարդու ներքին պատրաստվածությունը սուիցիդի նկատմամբ: Օրինակ՝ «լավ կլիներ քնեի ու չարթնանայի» և այլն:

Մյուս փուլում առաջանում են սուիցիդալ մտքեր: Սրանք սուիցիդի ակտիվ ձևերն են: Սկսվում է սուիցիդի իրականացման պլանի քննարկում, ընտրվում է ժամանակը և իրականացման վայրը: Հաջորդ փուլը սուիցիդալ մտադրություններն են, երբ ինքնասպանության մասին որոշումն արդեն ընդունված է, և սկսվում են ի կատար ածվել սուիցիդալ գործողությունները:

Ցավոք սրտի, ինքնասպանություններն այսօր, իրոք, լուրջ խնդիր են: Ընդսմին՝ ամբողջ աշխարհում բնակչության ամենատարբեր խավերի մոտ, այդ թվում նաև՝ դեռահասների, ինքնասպանությունների քանակն ունի կայուն աճի միտում:

Ուսումնասիրելով համաշխարհային վիճակագրությունը՝ կարող ենք հետևություն անել, որ ինքնասպանությունների խնդիրը հիմնականում կապված է տեխնիկական առաջընթացի ստվերային կողմերի, մենության զգացումի, սերունդների օտարացման, ամուսնության և ընտանիքի ինստիտուտի, բարոյականության, հոգևոր, ավանդական և կրոնական բարքերի անկման հետ: Դիտարկումները ցույց են տալիս, որ աշխարհում ինքնասպանությունների ամենափոքր թիվը հետամնաց և զարգացող երկրներում է, իսկ ամենամեծ տոկոսը՝ արդյունաբերական և զարգացած երկրներում: Արտադրական բարդ հարաբերությունները, դժվարամարս ինֆորմացիայի հսկայական հոսքը, սթրեսները,

կյանքի տեմպի անբնական արագությունը, անձնական դժվարությունները և կոնֆլիկտները, որոնցից արդեն հնարավոր չէ խուսափել ժամանակակից աշխարհում, խթանում են ինքնասպանությունների աճը:

Մասնագետները մատնանշում են բազմաթիվ այլ գործոններ, որոնք խթանում են ինքնասպանությունների փորձի թվի աճը: Դրանց թվում են արևի ակտիվության փոփոխությունը, երկրի մագնիսական դաշտերի ազդեցությունը, շրջակա միջավայրի աղտոտվածությունը: Վերջինս, ըստ որոշ հիպոթեզների, հանգեցնում է անգամ կետերի զանգվածային ինքնասպանությունների: Իսկ ըստ հունգար մասնագետների՝ որոշակի օդային զանգվածների՝ ցիկլոնների և անտիցիկլոնների, կուտակումը Բուդապեշտում առաջացնում է ինքնասպանությունների թվի աճ:

Սուիցիդոլոգները առանձնացնում են սուիցիդի մի շարք սոցիալական սադրիչ գործոններ՝

1. հասարակության ուրբանիզացիան և որպես դրա հետևանք հանդիսացող ընտանիքի ինստիտուտի թուլացումը
2. դեռահասների վաղ սեռական զարգացումը
3. կանանց չմտածված էմանսիպացիայի հետևանքները
4. զանգվածային լրատավամիջոցների ազդեցությունը գիտակցության վրա
5. հասարակական կյանքի այլ գործոններ:

1990 թվականին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից կատարված հետազոտության համաձայն՝ մահացության առաջին 3 պատճառներն են թոքերի բորբոքումը, ստամոքսա-

աղիքային հիվանդությունները և նորածնային հասակի հիվանդությունները։ 2020 թվականին այս ցուցակը կգլխավորեն սիրտ-անոթային հիվանդությունները և ծանր դեպրեսիաներն իրենց հաջոր հետևանքներով՝ ինքնասպանությունների խիստ աճով: Երրորդ տեղում կլինեն դժբախտ պատահարները:

Եթե դիտարկելու լինենք այն գործոնները, որոնք ազդում են մարդու կենսաբանական բնության վրա, կնկատենք, որ նույնիսկ այնպիսի հզոր գործոնը, ինչպիսին է հոգեկան հիվանդությունը, միայն 30 տոկոս դեպքերում է հանդիսանում ինքնասպանությունների անմիջական պատճառ: Ինքնասպանությունների համար հիմք են հանդիսանում սոցիալական, սոցիալ-հոգեբանական պատճառները, որոնք փլուզում են մարդու անձը՝ նրա «Ես»-ը: «Լինել, թե չլինել» հարցի լուծման կարևոր օղակը ինքը՝ մարդն է. ինչպես իրեն կպահի հոգեկան ճգնաժամային իրավիճակներում, ինչ ընտրություն կանի՝ հանդիպելով կյանքի բարդ իրավիճակներին հարմարվելու դժվարությունների հետ և չի՞ հանձնվի արդյոք՝ հայտնվելով հոգեկան տրավմայի ենթարկող երկարատև հանգամանքների ազդեցության տակ:

Ինքնասպանության մղող նախադրյալներից կարելի է համարել նաև հասարակությունը, որն իր անդամներից որոշակի իրավիճակներում պահանջում է, այսպես ասած, ինքնազոհաբերություն: Այս սոցիալական սպասումները դրված են հասարակական նորմերի, վարքային կանոնների և պատվի չգրված կոդեքսի մեջ: Այս ամենն իր արտացոլումն է գտնում երեխայի դաստիարակության համակարգի, ինչպես նաև արվեստի բազմաթիվ գործերում:

Հնում հասարակական շահերի համար աստվածներին ինքնակամ զոհաբերվելը գործնականում գոյություն է ունեցել բոլոր ժողովուրդների մոտ: Այրիների ինքնասպանությունները շատ երկրներում համարվել են ամուսնու նկատմամբ ունեցած մեծ սիրո և հավատարմության վկայություն: Նրանցից շատերի վճռականությունն ու անվախությունը զարմացնում է մեզ առ այսօր: Սեփական պատիվը պահելու, բռնությունից և խայտառակությունից խուսափելու համար կանանց ինքնասպանություններն ընդունված են եղել որպես հասարակական վարքագծի նորմ: Տղամարդկանց պատվի կոդեքսն այլ էր, որը պահանջում էր ինքնասպանությունների իր տրամաբանությունը: Դրանցից ամենակարևորը պատերազմական գործողություններում կրած պարտության ամոթի թողությունն էր:

Մարդիկ իրենց սպանում են ամենատարբեր պատճառներով՝ դժբախտ սիրուց, ուժեղ կրքի կամ դժբախտ ընտանեկան կյանքի պատճառով, սպանում են իրենց կյանքի իմաստը կորցնելուց, անզորությունից, սպանում են ամոթից և ձգտումների կորստից, սպանում են, որպեսզի խուսափեն դավաճանությունից և մատնությունից, ինքնասպան են լինում, որ փախչեն անհույս հիվանդությունից և տանջանքներից: Դեպքեր են լինում, երբ մարդ որոշում է կյանքից հեռանալ, որպեսզի բեռ չդառնա իր մտերիմների համար:

Ինքնասպանությունների հետագա աճը կանխելու համար անհրաժեշտ է մարդկանց որոշակի օգնություն ցուցաբերել: Սա նույնպես խնդիր է, որովհետև օգնություն ցուցաբերելու համար նախ անհրաժեշտ է

նկատել այն մարդուն, ով գտնվում է ինքնասպանության շեմին:

Տարված ամենօրյա վազքով և կեղծ արժեքների կուտակումով՝ մենք կորցրել ենք մի շատ կարևոր բան՝ մարդկային շփումը: Նույնիսկ ընտանիքներում այսօր նկատում ենք, որ ծնողները «ժամանակ չեն ունենում» շփվել սեփական զավակների և ընտանիքի մյուս անդամների հետ: Ներկայիս չափանիշներով հոգատար ծնողը հաճախ իր երեխայի հարցով դիմում է հոգեբանին արդեն այն ժամանակ, երբ վերջինս մոտ կես տարի, ընկած լինելով դեռահասական որոշակի շարժման մեջ, հասել է դեպրեսիայի խորը աստիճանի: Կարելի է ասել, որ այսօրվա տեխնոգեն առաջընթացը հեռացրել է մարդկանց իրարից, և մենք միայն կատարված դեպքից հետո ենք հասկանում, որ երեկ լրատվամիջոցներով հայտարարված ինքնասպանության հեղինակը մեր հարևանն էր, ում ամեն առավոտ բարևում էինք, բայց չէինք նկատում ժամանակ չունենալու պատճառով:

Հայաստանի համար ցավոտ և ամոթալի խնդիր է նաև օտարամոլությունը: Վերջերս մեզանում նշում են «հելոուինը», որը կարծում եմ, ոչ մի կապ չունի մեր ազգայինի և դավանանքի հետ: Սակայն, ինչպես ասվում է «Սարոյան եղբայրներ» ֆիլմում՝ գաղթականի հոգի ունենք: Հենց այդ պատճառով էլ ռիսկի գոտի ենք մտցնում մեր աճող սերնդին՝ ազատություն տալով դեռահասներին, նրանց ապրելակերպին: Իսկ նրանք տարվում են «էմոյական» կամ «գոթական» շարժումներով՝ նախ գայթակղվելով նրանց արտաքին տեսքով, ապա՝ ընդունելով դրանց «փիլիսոփայությունը»: Իսկ «էմոյական» շարժումն, օրինակ,

քարոզում է ինքնասպանություն՝ չափահաս դառնալուն պես:

Մյուս ցավոտ հարցը քայքայիչ աղանդների առկայությունն է, որոնք Աստծո և դավանանքի քողի տակ հետապնդում են շահադիտական նպատակներ: Որոշ աղանդներ՝ուղղակի, իսկ որոշներն էլ անուղղակի կերպով քարոզում են ինքնասպանություն: Եթե հաշվի առնենք, որ այդ աղանդներին անդամակցում են հիմնականում մոլորյալ, հոգեբանորեն թույլ մարդիկ, ովքեր «առևտրի» միջոցով ուզում են գնել իրենց ինդուլգենցիան կամ էլ ապագա բարեկեցիկ կյանքը, ապա հասկանալի է դառնում, թե որքան հեշտ է այդ մարդկանց դրդել ինքնասպանության, թեկուզև՝ անուղղակի կերպով: Իսկ, եթե այս ամենին գումարենք, որ այդ մոլորյալներն անկեղծորեն հավատում են, թե շփվում են Աստծո հետ, իրենց խաբված զգալուց հետո լուրջ փլուզում են ապրում:

Մյուս մեր երկրին բնորոշ վտանգը համակարգչային խաղերն են, որոնց նկատմամբ մոլությունը հանգեցնում է հոգեբանական քայքայման: Այժմ այս բնագավառը անվանում են «Համակարգչային կախվածություն» և որպես ախտորոշում ընդունված է արդեն Միջազգային առողջապահական կազմակերպության կողմից: Այս դեպքում, մարդը կյանքին նայում է ոչ թե որպես մի եզակի երևույթի, որը մարդուն տրվում է մեկ անգամ, այլ որպես մի «լեվել» փուլի, որը չհաջողելուց հետո հնարավորություն ունի կրկնել: Հետևաբար՝ մարդ սկսում է իր կյանքն ապրել անզգույշ և անխնա, ենթագիտակցության մեջ համոզված լինելով, որ այն հնարավոր է կրկնել, և հետևաբար, ինքնա-

սպանությանն էլ նայում է որպես հաջորդ կյանքի սկզբի, որն արդեն կապրի այլ կերպ:

Ինքնասպանությունների համար նման բերրի հողում լուրջ դեր են խաղում նաև զանգվածային լրատվական միջոցները, որոնք հաճախ, լուսաբանելով ինքնասպանությունը, խորքում դնում են ռոմանտիզմ և այլ արժեքներ, գուցե սեփական շահերի հետևից գնալով, մոռանում, որ կոչված են դաստիարակելու հասարակությանը, այլ ոչ՝ խեղաթյուրելու:

Այսօր ինքնասպանությունները կանխելու հիմնական միջոց է հանդիսանում անանուն վստահության հեռախոսը: Այն 1953 թվականին Լոնդոնում հիմնել է եկեղեցական Չադ Վարայը, և այժմ լայն տարածում է գտել ամբողջ աշխարհում: Այս ծառայությունը առաջնորդվում է՝ «չդատել, չքննադատել և նույնիսկ չզարմանալ» սկզբունքով:

Դեպրեսիա ապրող և ինքնասպանության մասին մտածող մարդկանցից շատերը չեն խոսում կամ չեն ուզում խոսել իրենց զգացողությունների մասին: Նրանք իրենց անպետք են զգում: Նրանք կորցրել են իրենց հույսը և իրենց զգացումները չեն արտահայտում, ենթադրելով, որ դրանք ծանր բեռ կդառնան շրջապատի ուսերին: Որոշները զգուշանում են ծիծաղի առարկա դառնալուց: Նրանց կարելի է հասկանալ, որովհետև ինքնասպանության մասին խոսողներին հաճախ լուրջ չեն ընդունում կամ էլ ասածին նայում են մատների արանքով: Այսպիսի հակազդումը կարող է բերել անուղղելի սխալի:

Որպես եզրակացություն կարող ենք ասել, որ ինքնասպանությունը սոցիալական երևույթ է: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ցանկացած

երկրում, ցանկացած դարաշրջանում որոշակի քանակի ինքնասպանություններ են տեղի ունենում, և անգամ ինքնասպանություն գործելու մեթոդները ճշգրիտ փոխհարաբերակցություն ունեն: Իհարկե, յուրաքանչյուր ինքնասպան որոշում է կայացնում իր անհատական ճանապարհով, սակայն անհատական այդ որոշումը նույնպես հետևանք է սոցիումի պահանջների:

Դիտարկելով ինքնասպանության պատճառները և այլ գործոններ՝ գալիս ենք այն ցավոտ եզրակացության, որ ինքնասպան եղել են, լինում են և լինելու են, քանի որ մարդկային երջանկության բարձր մակարդակով պայմանավորված իդեալական հասարակության գոյությունը միայն երազանք է ինչպես մեր, այնպես էլ՝ անցած կամ ապագա սերունդների համար:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Հոգեբանի տեսանկյուն

- Ինքնասպանությունների խնդիրը հիմնականում կապված է ոչ այնքան սոցիալ-քաղաքական գործոնների կամ հոգեկան հիվանդության, որքան՝ տեխնիկական առաջընթացի ստվերային կողմի, սերունդների օտարացման (տեխնոգեն առաջընթացը մարդկանց հեռացրել է իրարից), մենության զգացումի, ընտանիքի ինստիտուտի, բարոյականության, հոգևոր, ավանդական բարքերի անկման հետ:
- Ինքնասպան են լինում ոչ թե ուժեղ, այլ թույլ անձինք, ովքեր չեն կարողանում հաղթահարել իրենց խնդիրները
- Ինքնասպանություն գործող անձինք անխտիր գտնվում են հոգեկան անհավասարակշիռ վիճակում:
- Ինքնասպանության շատ դեպքեր հնարավոր է կանխել՝ շրջապատի հանդեպ ուշադիր լինելով
- Սուիցիդի սոցիալական մի շարք սադրիչ գործոններ են՝
  - զանգվածային լրատվամիջոցների՝ ինքնասպանության դեպքերի՝ հաճախ ոչ ճիշտ լուսաբանումը. դրա մեջ ռոմանտիզմ դնելը
  - համակարգչային կախվածությունը
  - օտարամոլությունը. դեռահասության տարիքում հեշտ է տարվել էմոյական կամ այլ շարժումներով, որոնց «փիլիսոփայության» հիմքը ինքնասպանության քարոզն է:
  - աղանդների գործունեություն. այս պարագայում կրոնագետ հոգեբանները, հոգեբան-

հոգևորականները կարող են օգնել ինքնասպանության շեմին գտնվող մարդուն, ետ պահել այդ քայլից:

Եկեղեցական տեսանկյուն

- Քրիստոնեության տեսանկյունից ինքնասպանությունն աններելի մեղք է, հայհոյություն և ըմբոստություն կյանք պարգևողի՝ Աստծու դեմ: Այն հետևանք է անհուսության և հավատքի տկարացման, երբ մարդ կորցնում է հույսն առ Աստված և չի հավատում հավիտենական կյանքին:
- Ինքնասպանությամբ մարդ իրեն դատապարտում է հավիտենական տանջանքների, քանի որ մեղքերը քավելու և թողություն ստանալու հնարավորություն այլևս չունի:
- Պետք է զանազանել «ինքնասպանություն» և «ինքնազոհողություն» եզրերը. հավատքի և սիրուց դրդված կյանքը նվիրաբերելն ու ինքնասպանությունը միանգամայն հակադիր երևույթներ են:
- Թեև ինքնասպանների վրա Եկեղեցին թաղման կարգ չի կատարում՝ ինքնասպանի դատաստանը թողնելով Աստծուն, սակայն հովվական և հոգևոր խնամքի տեսանկյունից կարևոր է նրա ընտանիքի անդամների ու հարազատների սփոփումը եկեղեցականի կողմից՝ մխիթարական խոսքով և աղոթական ներկայությամբ:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ինքնասպանություն

(քննարկման նյութեր)

Ծրագրի ղեկավար՝ Տ. Վահրամ քահանա Մելիքյան

Օգնական՝ Ժորա սարկավագ Սարգսյան

Մարիամ Ավետիսյան

Խմբագիր՝ Հեղինե Մկրտչյան

Կազմը՝ Backbone Creative Studio

oikoumene
ARMENIA ROUND TABLE
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ
actalliance